ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 սեպտեմբերի 2016 թվականի N 976 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. 2016 թվականի սեպտեմբերի 20-ին կայանալիք «Հայաստանը որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովի անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը 2016 թվականի ինն ամսում հատկացնել 18,375.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապա-

հովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման մեջ կատարել լրացում և փոփոխություն՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված համաժողովի իրականացման նպատակով Հայաստանի զարգացման հիմնադրամի հետ դրամաշնորհային պայմանագրի կնքումը:

4. Սահմանել, որ Հայաստանի զարգացման հիմնադրամը սույն որոշման 1-ին կետում նշված համաժողովի կազմակերպման նպատակով հատկացված գումարներով գնումներն իրականացնելու է բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. սեպտեմբերի 27
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 8-ի N 976 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.11 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1. Քաղաքականության միջոցառումներ

1.1. **Ծառայություններ**

Չափորոշիչներ			Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
			ոչ ֆինանսական ցուցանիշներ		ֆինանսական ցուցանիշներ	
			ինն ամիս	տարի	ինն ամիս	տարի
Ծրագրային դասիչը		Անվանումը «Հայաստանը որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողով Նկարագրությունը 2016 թվականի սեպտեմբերի 20-ին նախատեսված «Հայաստանը որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովի կազմակերպում				
1165	ԱԾ 07					
Քանակական		Համաժողովի կազմակերպում	1	1	-	-
Որակական		Մշակված չէ		X		X
Ժամկետայնության		Մշակված չէ		X		X
Մատուցված ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)				X	18,375.0	18,375.0
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն						
Վերջնական արդյունքի նկարագրությունը						

2016 թվականի սեպտեմբերի 20-ին նախատեսված «Հայաստանը որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովի կազմակերպման արդյունքում մասնակիցներին ՀՀ տնտեսության առկա իրավիճակի և զարգացման ներուժի ներկայացում, ինչպես նաև տեղական արտադրողների համար նոր գործընկերների բացահայտում և համագործակցության խթանում՝ արտահանման ծավալների ավելացման նպատակով
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները) Հայաստանի զարգացման հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 8-ի N 976 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին 2. Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը, խումբը, դասը)		ՀՀ 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
1165			**Ծրագիր**	
			ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն	
			Ծրագրի նկարագրությունը	
			Արդյունաբերության նոր ոլորտների զարգացում, արտադրված ապրանքների արտահանում, նոր շուկաների ընդլայնում, սերտիֆիկացման ծառայությունների փոխհատուցում, վարկավորման տոկոսագումարների սուբսիդավորում, մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում և խորհրդատվական ծառայությունների մատուցում:	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	
			Իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է հայրենական մրցունակ նոր արդյունաբերական արտադրատեսակների արտադրության զարգացում, ինչպես նաև արտահանման պոտենցիալ ունեցող ապրանքների արտահանման ծավալների ավելացում, արտահանման դիվերսիֆիկացիայի և	

			տնտեսական շարունակական աճի ապահովում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	
	ԱԾ 07		«Հայաստանը որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողով	18,375.0
			Մատուցվող ծառայության նկարագրությունը	
			2016 թվականի սեպտեմբերի 20-ին նախատեսված «Հայաստանը որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովի կազմակերպում	
			Ծառայություն մատուցողի անվանումը	
			Հայաստանի զարգացման հիմնադրամ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ